

Պաշտոնական ընդդիմախոսի

Պարոնիկյան Ռուզաննա Գառնիկի <<Նոր ազոտ-պարունակող միացությունների արդյունավետության գնահատումը կենդանիների օրգանիզմում էպիլեպտաձև վիճակների կասեցման համար>> թեմայով– Գ.00.09. «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Տարբեր հոգեկան հիվանդություններով հիվանդների աճը պատճառ է հանդիսանում հոգեներգործուն դեղամիջոցների փնտրտուկի, նաև՝ արդեն իսկ հայտնի դեղամիջոցների հակացնցումային և հոգեմետ հատկությունների հիման վրա նոր նեյրոտրոպ պրեպարատների առաջարկի և սինթեզի: Ազոտ պարունակող հետերոցիկլիկ համակարգերի շուրջ 2000 ածանցյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ, ամենայն հավանականությամբ, հետերոցիկլերի ածանցյալների քիմիական կառուցվածքի և կենդանիների օրգանիզմում կենսաբանական ակտիվության միջև բացահայտված կապի շնորհիվ դրանց մեծ մասն ունակ են կանխելու օրգանիզմում փորձարարական ճանապարհով առաջացած ցնցումային վիճակները: Ռ. Պարոնիկյանի <<Նոր ազոտ-պարունակող միացությունների արդյունավետության գնահատումը կենդանիների օրգանիզմում էպիլեպտաձև վիճակների կասեցման համար>> ատենախոսական աշխատանքը վերաբերվում է փորձարարական ճանապարհով կենդանիների մոտ առաջացած ցնցումային վիճակների և դրա դեմ ազոտ պարունակող թեկնածու դեղամիջոցների օգտագործման արդյունավետության գնահատմանը:

Ատենախոսական աշխատանքը, ներկայացված է 300 էջով, բաղկացած բովանդակությունը, գրական ակնարկը, հետազոտությունների նյութերն ու մեթոդները, սեփական հետազոտությունները /երեք գլուխներ/ և արդյունքների քննարկումը, ամփոփումը, եզրակացությունները և գրականության ցանկը բաժիններից, իր կառուցվածքով և բաժինների ծավալով լիովին բավարարում է ՀՀ ԲՈՀ –ի կողմից դոկտորական ատենախոսությունների նկատմամբ պահանջներին: Ներկայացված է 48 նկար, 123 աղյուսակ, 442 մատենագիտական հղումներ և հավելված:

<<Ներածություն>> բաժնում հեղինակը համառոտ ներկայացնում է ատենախոսական աշխատանքի արդիականությունը, աշխատանքի նպատակի իրականացման համար առաջադրված խնդիրների լուծման նպատակահարմարությունն ու կիրառական նշանակությունը: Խնդիրներն են՝ << ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ի Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում սինթեզված հետերոցիկլիկ նոր միացությունների հակացնցումային ակտիվությունը հայտնաբերելու համար առաջնային սկրինինգի իրականացնելը՝ փորձարարական կենդանիների, առավելագույն էլեկտրաշոկի և կորազոլի ցնցումային մոդելների միջոցով; քիմիական կառուցվածք – կենսաբանական ազդեցություն կապի արդյունավետության գնահատումը; օգտագործելով նաև ա/ «Բիոսկոպ» համալիրը, Բ/մոլեկուլային մոդելավորումը, մասնավորապես, PASS մեթոդը և մոլեկուլային դոկինգը կենսաբանորեն առավել արդյունավետ քիմիական նյութերի ներդրում /հակացնցումային և հոգեմետ/ ակտիվությունների գնահատումը; նոր ազոտ-պարունակող միացությունների համեմատումը բժշկության մեջ հայտնի և լայնորեն օգտագործվող դեղերի հետ:

Հաջորդ <<Գրական ակնարկը>> բաժնում Ռ. Պարոնիկյանը ավելի մանրամասն ներկայացնում է հակացնցումային (հակաէպիլեպտիկ)/հոգեֆարմակոլոգիական դեղերի նկարագիրը՝ որոշակիորեն հիմնավորելով նաև կիրառված մեթոդների արդիականությունը, ստացված արդյունքները, եզրակացություններն ու եզրահանգումները:

Ատենախոսական աշխատանքն աչքի է ընկնում ուսումնասիրությունների արդյունավետ դիզայնով: Ռ. Պարոնիկյանի կողմից կիրառվել է ժամանակակից մեթոդների մի հսկա համահունչ փոխկապակցված համախումբ: Միացությունների հակացնցումային ազդեցությունը գնահատելու համար կիրառվել է թեստերի հավաքածու. մաքսիմալ էլեկտրաշոկը որպես գեներալիզացված տոնիկ ցնցումների մոդել, կորազոլի ենթամաշկային և ներերակային ներմուծման մոդելները որպես գեներալիզացված տոնիկ, կլոնիկ ցնցումների յուրահատուկ մոդելներ, ինչպես նաև մի շարք ցնցումային նյութերով (պիկրոտոքսինով, թիոսեմիկարբազիդով, ստրիխնինով, նիկոտինով, կամֆորայով և այլն) առաջացած կլոնիկ, տոնիկ ջղաձգումների թեստերը: Որպես պարզիալ էպիլեպսիայի մոդել կիրառվել են պենիցիլինային և «ամիգդալա-կինդինգ» մոդելները: Առավել ակտիվ միացությունների հոգեմետ ազդեցության սպեկտրը ուսումնասիրվել է ըստ հետևյալ թեստերի. «բաց դաշտ», «բարձրացված խաչաձև լաբիրինթոս», «հարկադրված լող», «կոնֆլիկտային իրավիճակ»,

«Էլեկտրաշուկային ռետրոգրադ ամնեգիա», «պտտվող առանցք», «հակամոնոամինօքսիդազային ակտիվություն»:

Ռ.Պարոնիկյանի կողմից կատարված ահռելի հետազոտությունների արդյունքում բացահայտվել են մի շարք նոր, նախկինում չնկարագրված օրիգինալ միացություններ, որոնք կարող են կիրառություն գտնել բժշկական պրակտիկայում որպես հակաէպիլեպտիկ դեղամիջոցներ՝ միաժամանակ համակցված հոգեմետ հատկություններով: Պաշտպանությանը հետազոտությունների արդյունքում ներկայացվել են 9 եզրահանգումներ և 2 առաջարկ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները, արդյունքներն ու քննարկումները, ինչպես նաև հեղինակի գիտական աշխատությունները լիովին արտացոլում են հիմնախնդրի ֆիզիոլոգիական ասպեկտը, իսկ հրատարակված հոդվածների համախումբը հիմնավորում է հետազոտության հիմնախնդրի, ստացված արդյունքների և եզրակացությունների արդիականությունն ու ամբողջականությունը: Կատարված աշխատանքի հիման վրա, բացի հոդվածներից, տրվել է երեք ՍՍՀՄ հեղինակային իրավունք և յոթ ՀՀ արտոնագիր:

Ատենախոսության մեջ Ռ.Պարոնիկյանը բավականին պարզ և մատչելի ներկայացնում է հետազոտությունների մեթոդները: Սեղմագրի ամփոփագրում, կարծում եմ, կան որոշ ընդհանուր դարձվածքներ, որոնք անհասկանալի կլինեին առանց ատենախոսության: Օր. «Նոր քիմիական դասերին /ո՞ր դասերին/ պատկանող ազոտ-պարունակող հետերոցիկլիկ համակարգերի շուրջ 2000 ածանցյալների.....», կամ՝ «Միացությունների հակացնցումային ազդեցության սպեկտրը ուսումնասիրվել է միջազգային հանրության կողմից ընդունված և կիրառվող մոդելներով» /ո՞ր մոդելներով/: Չնայած, այս նախադասություններից անմիջապես հետո սեղմագրում տրվում են մանրամասն նկարագրություններ, բայց, այնուամենայնիվ, լավ կլիներ ամփոփագրում խուսափել նման ձևակերպումներից:

Ատենախոսին ուղղված հարցերն են՝

-նոր ազոտ-պարունակող միացությունների արդյունավետությունը համեմատվե՞լ է բժշկության մեջ հայտնի և լայնորեն օգտագործվող դեղերի հետ: Այդ դեղերն ունե՞ն արդյոք առնետների սեռից կախյալ ազդեցություններ:

-ընդհանրապես, իրականացվե՞լ են արդյոք առնետների սեռից և տարիքից կախյալ հետազոտություններ ատենախոսի կողմից:

-ներկայումս բավականին հաճախ է քննարկվում դեղամիջոցների ազդեցությունները աղիքային միկրոբիոտայի վրա. Քննարկվում է նաև դեղամիջոց –աղիքային միկրոբիոտա – ուղեղ կապի գոյությունը, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում նոր դեղամիջոցների սկրինինգի համար: Կա՞ն արդյոք այդպիսի գրական տվյալներ ազոտ-պարունակող միացությունների վերաբերյալ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ Ռուզաննա Գառնիկի Պարոնիկյանի կողմից ներկայացվող «Նոր ազոտ-պարունակող միացությունների արդյունավետության գնահատումը կենդանիների օրգանիզմում էպիլեպտաձև վիճակների կասեցման համար» թեմայով ատենախոսությունն իր կառուցվածքով և բովանդակությամբ լիովին բավարարում է ՀՀ ԲՈՀ –ի կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը «03.00.09-մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ:

ՀԱԱՀ Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի
բաժնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ.՝

Աստղիկ Փեփոյան

կ.գ.դ. Ա. Զ.Փեփոյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
գիտական քարտուղար
գ.գ.թ., դոցենտ՝



Գայանե Ավազյան

30.06.2021թ.